

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտասի պողոտա
հ.49/10, հ49/9 հասցեներում այգու վերակառուցման և
հասարակական, զարգացման բազմաֆունկցիոնալ կենտրոնի
կառուցման աշխատանքների

Պատվիրատու՝

«Հայկ-88» ՍՊԸ

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ տնօրեն



Ստորագրողի անունը

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն.....	3
1.2	Ձեռնարկող՝	3
1.2	Հապավումներ	3
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	4
1.4	Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
1.4.1	Նախատեսվող գործունեության նկարագիր.....	7
1.4.2	Պատմական քաղաքաշինական ակնարկ	7
1.4.3	ԱՅԳԻՆ	8
1.4.4	ԲԱԶՄԱՑՈՒՆԿՅՈՒՆԱԼ ԿԵՆՏՐՈՆԸ	10
1.4.5	ԱՎՏՈՎԱՅԱՆԱՏԵՂԻՆ	14
1.4.6	ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ՏՏ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ	15
1.4.7	Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը	18
1.4.3	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում.....	30
1.4.4	Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ	31
1.4.5	Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ.....	31
	Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ ..	34
1.4.6	Կադրային ապահովում և շինտեխնիկա	36
1.4.7	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	38
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	40
2.1	ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.....	40
2.2	ԿԼԻՄԱՆ	44
2.3	Օդային ավազան	47
2.4	Ջրային ռեսուրսներ	49
2.5	Հողերի նկարագիրը	50
2.6	Հիմնային աշխատանքներ.....	50
2.7	Կենսաբազմազանություն	51
2.8	Թափոնների կառավարում	52
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	54
3.1	ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	54
3.2	ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ.....	55
3.3	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	55
3.3.1	ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ.....	55
3.3.2	ԶՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	56
3.3.3	ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐ	56
3.3.4	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	63
3.3.5	ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ	65
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	66
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	67
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	70
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	62
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	63

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ << Հայկ-88 >> ՍՊԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական
հասցեն՝ ք.Երևան, Նոր Արեշ 24փ տ13/1

1.4 Ձեռնարկողի փաստացի
գործունեության հասցեն՝ ք.Երևան, Նոր Արեշ 24փ տ13/1

1.5 Նախատեսվող գործունեության
վարչական տարածքը՝ ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Այգու վերակառուցման և հասարակական, զարգացման կենտրոնի, ինչպես նաև բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել Կոմիտասի պողոտա հ.49/10, հ49/9 հասցեներում:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից հանգստի և ժամանցի վայր:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Նախատեսվող համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Իրավական հիմքերը

Նախատեսվող գործունեության կազմակերպումն իրականացվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթօրենսդրական ակտերի) այն պահանջներով, որոնք առնչվում են շրջակա միջավայրի պահպանության և մասնավորապես նախատեսվող գործունեության կարգավորման հետ: Դրանցից հիմնականներն են՝

1. ՀՀ Հողային օրենսգիրք (02.5.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրք (04.6.2002թ.),
3. <<Թափոնների մասին>> ՀՀ օրենք (24.11.2004 թ.),
4. <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենք (07.02.2012թ.),
5. <<Մթնոլորտային օդի պահպանության մասին>> ՀՀ օրենք (01.11.1994թ.),
6. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենք (21.06.2014թ.),
7. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենք (11.04.2005թ.),
8. <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենք (30.05.2001թ.),
9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”
10. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N 533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”
12. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու, լիազոր մարմիններ սահմանելու եվ ապրանքների արտահանման եվ (կամ) ներմուծման լիցենզիաների ու թույլտվությունների տրամադրման շրջանակային կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 25.12. 2014 թ-ի N 1524-Ն որոշում,
13. <<Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված եվ սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման եվ ներմուծման լիցենզիայի եվ հայտի ձեվերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման եվ ներ-մուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> 05.02.2015 թ-ի N 90-Ն որոշում,

14. ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-Ն որոշում,

15. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի «Արտադրության և սպառման թափոնների տեղադրման և վնասագերծման անվտանգ պայմանների ուղեցույցին հավանություն տալու մասին» N16 արձանագրային որոշում,

16. ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը հաստատելու մասին» N 430-Ն հրաման:

19. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.),

20. «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.),

21. «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.),

22. ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում,

23. ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում,

24. ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում,

25. ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշում,

26. «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշումը:

1.4 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.4.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

Նախագծված է մշակված է «ԻԹԱԿԷ 999» ՍՊԸ-ի կողմից համաձայն՝

- Նախագծային աշխատանքների կատարման պայմանագրերի:
- Պատվիրատուի կողմից հաստատված տեխնիկական առաջադրանքի:
- Ճարտարապետի մասնագիտական գործունեության արտոնագրի (Արտոնագիր ՃԲԴ-Ա-0691 բարձրագույն դաս, ենթադաս «Ա», ճարտարապետ Անանյան Տելեմակ Ալբերտի):
- ՀՀ-ում գործող շին. նորմերի:

Նախատեսվում է ք. Երևան, Արաբկիր համայնքի, Կոմիտասի պողոտա 49/10 հասցեում գտնվող պուրակի վերակառուցման նախագիծ՝ 10000քմ մակերեսով, նախատեսելով փոքր ճարտարապետական ձևեր, ամֆիթատրոն, երաժշտական զարգացման կենտրոն, ջրավազան-շատրվան, ստորգետնյա ավտոկայանատեղի և մանկական ՏՏ զարգացման կենտրոն:

1.4.2 Պատմական քաղաքաշինական ակնարկ

Նախագծվող կառույցը գտնվում է Երևանի Արաբկիր համայնքում: Արաբկիրը սկզբնապես եղել է առանձին բնակավայր, որի համար 1929թ. Ալ. Թամանյանի կողմից մշակվել է գլխավոր հատակագիծ: Ըստ այդ նախագծի Արաբկիրը իրենից ներկայացնում էր առանձին, անհատական տներով կազմակերպված քաղաքաշինական միավոր: Այն տեղակայված էր ներկայիս համայնքի կենտրոնական մասում, ուներ կենտրոն, օղակաձև զբոսայգի, երկրորդական կենտրոններ և շրջապատված էր ծառաստանով: Բնակավայրը երեք հիմնական փողոցներով կապվում էր Երևան քաղաքի հետ: Դրան հաջորդող քաղաքաշինական փաստաթղթերն արդեն մշակվել են Երևանի գլխավոր հատակագծերի շրջանակներում և փոխկապակցված են եղել քաղաքի հատակագծային մյուս շրջանների հետ:

1938թ. գլխավոր հատակագծի առանձնահատուկ գաղափարներից են եղել.

- Կամրջով Բաղրամյան փողոցի միացումը Աջափնյակին:
- Երկաթգծի երկայնքով ընդարձակ կանաչապատ գոտու ստեղծումը:
- Հյուսիսային առանցքի շեշտումը, որի միջոցով կանաչ գոտին միանում է ձորի համակարգին:

1972թ. գլխավոր հատակագծում.

- Հյուսիսային ճառագայթի գաղափարն ավելի ակնառու է, այստեղ ավելանում է հասարակական կենտրոնը (տե՛ս՝ Հյուսիսային առանցքի վրա առկա հրապարակները, ծավալատարածական դոմինանտները, հուշարձանները և իրականացման ժամանակացույցը)

• Հյուսիսային առանցքը այս հատվածում շեշտվել է ծառուղիով, որը սկսվելով գիտահետազոտական չորս բարձրահարկ կառույցների մոտից, հասնում է մինչև Նաիրի Զարյան փողոց: Քաղաքաշինական գործառնական առումով գոտին մի կանաչապատ առանցք է, որը կապում է Կոմիտասի պողոտան և Նաիրի Զարյան փողոցը և համայնքի համար հանդիսանում է կանաչապատ, ռեկրեացիոն միջավայր:

Համաձայն Արաբկիր համայնքի ներկա գոտևորման նախագծի՝ համայնքի առաջնային հրատապ խնդիրներից են հասարակական և կանաչապատ վայրերի ստեղծումը:

1.4.3 ԱՅԳԻՆ

Հատակագծային կազմակերպումը, մանր ճարտարապետական ձևեր, ծավալատարածական և հատակագծային լուծումներ:

Նախատեսվում է ապամոնտաժել մոտակայքում առկա մանրածախ առևտրի տաղավարները և վերակառուցել պուրակը, ինչպես նաև ուժեղացնել Կոմիտաս – Հյուսիսային առանցք երբեմնի կապը:

Հատակագծով նախատեսվում է պուրակի կենտրոնական մասը դարձնել գրավիչ ու հեշտ հասանելի դիմային (հարավային) հատվածից՝ Կոմիտասի պողոտայից:

Հարավ-արևելքից նախատեսում ենք լայն հետիոտն ճեմուղի՝ երեսապատված վեցանկյուն խոշոր քարե սալերով, որը սահուն կորով լծորդվում է այգու կենտրոնական միջոցառումների հրապարակի հետ:

Հարավ-արևմուտքից՝ օգտագործելով նիշերի զգալի տարբերությունը (ավելի քան 6մ), նախատեսում ենք կիրառել իրար հաջորդող լայն աստիճաններ՝ վառ արտահայտված ուղղահայաց մակերեսներով: Աստիճանաշարքերի միջև գոյացող հորիզոնական հարթակները կլինեն մանրախճի ծածկույթով: Հորինվածքն ամբողջական է դառնում ներգծված լայն հորիզոնական մակերեսներ հանդիսացող սպորտային հրապարակով և ջրավազան-շատրվանով:

Խոշոր զբոսուղիներից զատ նախատեսված են նաև առավելապես ֆունկցիոնալ ճեմուղիներ՝ ապահովելով անխոչնդոտ շարժման նորմերը պուրակի ամբողջ տարածքով: Ճեմուղիների նկարվածքը մշակելիս հիմք է հանդիսացել տարածքում առկա հետիոտն արահետների ցանցը: Այսպիսով նախատեսում ենք ունենալ հարմարավետ հետիոտն անցանելիություն դեպի տարածքի հյուսիս:

Հաշվի առնելով տարածքի ֆունկցիոնալ հարմարավետության կարևորությունը նաև սպասարկման տեսանկյունից՝ Կոմիտասի պողոտային հարող մայրին կից,

բազմաֆունկցիոնալ կենտրոնի արևելյան հատվածում նախատեսում ենք փոքր հրապարակ: Այստեղ տեղակայված կլինեն ծառայողական մուտքը և հեծանիվերի կայանատեղերը:

Պուրակի կանաչապատ մակերեսներում նախատեսում ենք ձևավորել հողաթմբեր, որոնք կհանդիսանան յուրահատուկ լանդշաֆտային էլեմենտներ: Այս մոտեցմամբ է լուծված մասնավորապես ամֆիթատրոնը՝ այն էլիպսաձև է և ամբողջությամբ ներգծված է բլրակի մեջ: Երեսապատումը և նստարանները նախատեսվում է իրականացնել արցախի սպիտակ մարմարացված կրաքարով: Կլինեն շուրջ 350 նստատեղեր, դասավորված 7 շարքով և պաշտպանված ՊՎԹ ծածկով, իսկ ընդհանուր մակերեսը կկազմի 254 քմ տարածք: Ամֆիթատրոնում նախատեսվում է իրականացնել ինչպես համերգներ, այնպես էլ կինոդիտումներ:

Ճեմուղիները հարդարվելու են սպիտակա-մանուշակագույն մարմարացված կրաքարե և բազալտե մասիվ վեցանկյուն սալերով: Նախատեսվում է գոյություն ունեցող ֆլորան հարստացնել ավելի քան 30 ծառատեսակներով, թփատեսակներով և ծաղիկներով: Բույսերի ընտրությունը պայմանավորված է նրանց դիմացկունությամբ, տափաստանային չոր ու շոգ, քաղաքային անբարենպաստ պայմաններին հեշտ հարմարվելով, ցրտադիմացկունությամբ, երկարակյացությամբ, ինչպես նաև ոչ շատ խոնավասեր, սաղարթախիտ ու բարձր կաչոդականությամբ:

Նախագծով նախատեսվող մանր ճարտարապետական ձևերն են՝ դեկորատիվ ջրավազան - շատրվան, բաց ամֆիթատրոն, խաղահրապարակներ, սպորտային, մարմնամարզության հրապարակներ, միջոցառումների հրապարակ, լենդ-արտ ինստալացիաներ, կինետիկ քանդակներ, ավանդական հայկական վիշապաքարերի ցուցադրություն՝ մասնակի ցանկապատ պուրակի հետիոտն շարժը կանոնակարգելու նպատակով, լուսավորություն և դիդակտիկ ու նավիգացիոն վահանակներ:

Ջրավազան-շատրվանը՝ 425 քմ մակերեսով, մոտ 20x21մետրի սեգմենտային ուրվագծով ջրային հարթություն է, որից, տարերային դասավորվածությամբ, վեր են ցայտկում պարզ ցայտադրյուրաձև շատրվաններ: Ջրավազանի խորությունը 60 սանտիմետր է, ցայտող շատրվանի առավելագույն բարձրությունը՝ 9 մետր: Կից նախատեսվում է ստորգետնյա տեղնիկական տեխնիկական սպասարկման սենք՝ 12 քմ

մակերեսով, որը իր հերթին ստորգետնյա հորիզոնական կապ կունենա ավտոկայանատեղի հետ:

Սպորտային հրապարակը՝ 200 քմ մակերեսով, թեթև ատլետիկայի և գնդակով սպորտային խաղերի համար նախատեսված հարմարանքներով հագեցած, ռետինե համապատասխան ծածկույթով էլիփսաձև հրապարակ է, շրջապատված իրենից մինչև 1 մետր բարձրության տրիբունաներով, թե հանդիսատեսի, թե մանուկների ծնողների համար:

1.4.4 ԲԱԶՄԱՅՈՒՆԿՅՈՒՆԱԼ ԿԵՆՏՐՈՆԸ

Ճարտարապետական լուծումներ

Տվյալ նախագծի շրջանակում գործ ունենք Հյուսիսային առանցքի գազաթային մասի հետ, որը քաղաքի կարևորագույն «երակներից» մեկն է: Խոսքը Կոմիտասի պողոտայի և բուլվարի հատման հանգույցի վերնամասում և ԳԱԳ 4 շենքերի առաջնամասում գտնվող հատվածի մասին է:

Հյուսիսային առանցքի գաղափարը բեկումնային է Երևան քաղաքի քաղաքաշինական զարգացման վերջին դարաշրջանի և ժամանակակից ճարտարապետական «թատերաբեմում» տեղի ունեցող իրադարձությունների շղթայում:

Նրա հիմքում դրված են հետևյալ երկու հիմնական թեմաները.

- ստեղծել ուժեղ, վառ արտահայտված ճարտարապետությամբ քաղաքի գերիշխող, դեպի հարավ բացվող և Երևանի քաղաքաշինական միջավայրի համար որպես կողմնացույց ծառայող առանցք, որն իր հերթին կկատարի քաղաքաշինական ցանցում իրեն հատկացված «ողնաշարի» դերը և մինչև 19-րդ դարը զարգացած փողոցային ցանցի հիմնական ծրագծերը կարծես ողերի պես կխարսխվեն կամ սկիզբ կառնեն այս առանցքից:

- առանցքի և քաղաքաշինական ցանցի հատման հանգուցակետերը շեշտել ունիկալ ճարտարապետական դոմինանտներով և ստեղծել հանգուցային, հողակապային քաղաքաշինական միջավայր (Ազգային Օպերայի շենքը, Թամանյանի պուրակը, Կասկադ համալիրը, Հյուսիսային պողոտան և Հանրապետության հրապարակը, Երևանի բանալին և նույնիսկ Սբ. Գրիգոր Լուսավորիչ Երևանի Մայր տաճարը, Ռոսիա կինոթատրոնը, Երևանի Երկաթուղային կայարանը՝ իր Սասունցի Դավթի արձանով և այլն):

Հեղինակների առաջ կանգնած էր խնդիր ստեղծել ճարտարապետություն, որը կբավարարի քաղաքացիների թե՛ ֆունկցիոնալ, թե՛ էսթետիկ պահանջները:

Այն իր կերպարով պետք է կատարի երկու առաքիլություն՝

1. համապատասխանի ժամանակակից բազմաֆունկցիոնալ կենտրոններին ներկայացվող պահանջներին, նրանց գործնական, հասարակական ֆունկցիային,

2. իր գեղագիտական, և գործառությային ձևակերպման ուժով նպաստի հարևան Արաբկիրի բուլվարը վերակենդանացնելու գաղափարին և ունենա Հյուսիսային առանցքի այս հանգույցը շեշտադրելու, ակտիվացնելու միտում:

Նախագծի ծավալատարածական հորինվածքի, կոնստրուկտիվ և այլ տեխնոլոգիական լուծումները կատարված են 21-րդ դարի սկզբին բնորոշ շինտեխնոլոգիաներին հատուկ պարամետրիկ ճարտարապետության և ավտոմատացված շինարարական տեխնոլոգիաների կիրառմամբ:

Նման տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ազատ աշխատել կրկնակի կորության մակերևույթների հետ, կիրառել բարդ երկրաչափություն ունեցող ֆորմաներ և տարրեր, աշխատել թվային պարամետրերի հետ և մեկ «վրձնահարվածով», մեկ մեծաթիչք ծածկի տակ վերցնելով մակերեսը, ազատ լուծել բարդ ֆունկցիոնալ կամ տեխնոլոգիական խնդիրներ:

Այս մոտեցումը նաև թույլ է տալիս ստանալ նորարար, վառ, յուրահատուկ, ուժեղ և տպավորիչ կերպար, որը ներդաշնակորեն կներգծվի գոյություն ունեցող միջավայրում:

Ավելին, հանրային նշանակությունը ընդգծելու համար առաջարկվող հայեցակարգը խթանում և մեծացնում է միջավայրի զգացում ստեղծելու ուղղությամբ միտված աշխատանքը, որն ունի իր ինքնությունը:

Դա անելու համար ծրագրի առանցքային մասը կենտրոնական հրապարակի և պարտեզի նախագծումն է: Վերջինս, փառատոնների, համերգաշրջանների և տոների շնորհիվ, ներդրումային հեռանկարներ կստեղծի Հայաստանում առողջ սննդի և ազգային գյուղատնտեսության զարգացման, ճանաչելիության և արտադրության ծավալների մեծացման մեջ: Երկարատև հեռանկարում այգին և հովանոցն իրենց վառ տեսքով անգամ դերակատարում կունենան հանրային գործունեության լայն սպեկտրի

կատալիզացնող տարածքի գենետիկ պատմության մեջ՝ դառնալով նոր ուսանյակ, որի միջոցով հնարավոր կլինի նայել քաղաքի ապագային:

Նախատեսվում է գոյություն ունեցող կիսակառույցը վերցնել մեկ ամբողջական վեղարի տակ: Մեկ ծածկի տակ համախմբվելու են բազմաֆունկցիոնալ կենտրոնի բոլոր տիպի սպասարկման սենքերը, ապահովելով ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխան միջավայր, հարմար ժամանցի, սննդի, ցուցահանդեսների, առևտրի, երիտասարդների և երեխաների զարգացման և զվարճանքի համար:

Քառանկյուն – պրիզմայաձև, ուղղանկյուն – վերտիկալ և հորիզոնական գերիշխող ծավալների բազմության մեջ հեղինակները նպատակահարմար են գտել հնարավորինս հակադրվել, փափկեցնել, կիրառել առավել «փափուկ», սահուն, սֆերիկ, կրկնակի կորության մակերևույթներով ստեղծված ծավալատարածական հորինվածք: Վերոհիշյալ ծավալի ստեղծման համար՝ ժամանակակից պարամետրիկ մոդելավորման սկզբունքների կիրառումը թույլ տվեց ստեղծել արդիական և արտահայտիչ մեկ խոշոր «վրձնահարվածով» կազմակերպված թե՛ ներքին, թե՛ արտաքին միջավայր: Կարծես ոճային Հայ ավանդական Վիշապի կերպարով՝ այն իշխում է բլուրի վրա, հյուսային ճառագայթի վերջնամասում, հանդիսանալով Արաբկիր համայնքի յուրօրինակ, խորհրդավոր, դոմինանտ նշան: «Վիշապը»՝ Կոմիտասի պողոտայի և ընդհանրապես Հյուսիսային ճառագայթի հայեցակարգում ներկայանում է որպես հայ ժողովրդի կոլեկտիվ անգիտակցական պատմական հիշողության դրոշմ՝ իմաստության, ուժի և առասպելական կենդանու կենսարար էներգիայի խորհրդանիշ: Հայտնի է, որ վիշապը հայ ազգի տոտեմն է եղել հնագույն ժամանակներից: Պատմությունից մեզ հայտնի է, որ Տիգրան Երվանդունու արքայության օրոք օձը և վիշապը պատկերված էին Հայոց դրոշի վրա: Հայտնի է նաև, որ շումերական դիցարանում Հայան հանդիսանում էր իմաստության աստվածը և պատկերվում էր օձի տեսքով: Մովսես Խորանացին հիշատակում է հայ ժողովրդի նախնիներին որպես Վիշապագունք, ուր Վիշապ նշանակում է իմաստուն, «օձ», «վիշապ» իսկ ազունքը՝ ազգ, սերունդ: Հետաքրքիր բացատրություն է նաև տալիս «վիշապ» բառին Եզնիկ Կողբացին. «վստահաբար, վիշապը չունի այլ էություն, քան օձայինն է: Աստվածաշնչի հայերեն թարգմանության

մեջ, վիշապ է անվանվում ծովային հրեշը»: Այսպիսով անկհայտ է դառնում, որ Եզնիկ Կեղբացու ժամանակ կար «վիշապ» բառի բացատրության կարիք, ինչ և նա անում է:

Կառույցն ունի բաց հատակագիծ: Երկրորդ լույսերի առկայությամբ նպատակ է դրվում ստորին, նկուղային և կիսանկուղային հարկերն ապահովել բնական լուսավորությամբ: Համալիրն ունի մեկ գլխավոր մուտք՝ 3,950 նիշից՝ Կոմիտասի պողոտայի կողմից, երկու լրացուցիչ մուտքեր այգու վերին մասի -0,000 նիշից, մեկ հետիոտնային, աշխատանքային մուտք և ավտոկայանատեղի, մեկական ելումուտ հյուսիսից, ԳՀԱ շենքերի դիմաց ընկած հրապարակից և երկուական եվակուացիոն ելք յուրաքանչյուր մասնաշենքի աջ ու ձախ թևերից:

Կոնստրուկտիվ լուծու մներ

Գոյություն ունեցող կառույցն իրականացված է մոնոլիտ ե/բ կարկասային, սյուն-հեծանային համակարգով, ամենամեծ թռիչքը 9800 մմ է, ամենափոքրը՝ 5800 մմ: Ծածկն իրականացված է ունիֆիկացված, հավաքովի, կլորանցքավոր պանելներով, պատերը ինքնակրող, կանոնավոր շարվածքով տուֆի քարերով: Գոյություն ունեցող հարավային ճակատը հարդարված է կապույտ և կարմիր ալյումինե-պլաստիկ կոմպոզիտային պանելներով: Կառույցն անավարտ է: Շահագործվում է ընդհանուր մակերեսի 30%-ը:

Առաջարկվող վերակառուցման արդյունքում ստեղծվող կոնստրուկտիվ համակարգը, դասակարգվում է որպես հիբրիդային, կոմբինացված՝ այն է կրավածքով ակտիվ՝ կարկասային ե/բ սյուն հեծանային, մեկերևույթով ակտիվ՝ ե/բ պատային ու թե ֆորմայով, թե վեկտորով ակտիվ՝ մետաղական մեծաթռիչք թաղանթների և տարածական ֆերմաների համադրում: Գոյություն ունեցող կարկասային ե/բ համակարգի տեխնիկական փորձաքաննության արդյունքները ստանալուն պես հայտնի կլինի, թե գոյություն ունեցող հիմքերը և ուղղահայաց կրող համակարգը՝ առկա վիճակում կկարողանա՞ն ծառայել որպես հենարան՝ գմբեթի բեռը ընդհունելու համար, կարիք կունանա՞ն ուժեղացման, թե կնախատեսվեն հիմնովին նոր, ավտոնոմ ուղղահայաց կրող համակարգեր, որոնց վրա կբախշվի գմբեթի բեռը:

Պարամետրիկ մեծաթռիչք ծածկը նախատեսվում է իրականացնել որպես կրկնակի կորության թաղանթ-ցանցային մակերևույթ, որի ենթահամակարգում մետաղական տարածական թաղանթ-ցանցի կարկաս է և արտաքին ապակյա

երեսապատում: Համակարգը նախատեսվում է իրականացնել թեթև գլանված ալյումինե՝ կոմպոզիտային բարդ տարածական պրոֆիլներից:

Գմբեթը նախատեսվում է իրականացնել ժամանակակից պարամետրիկ ճարտարապետության հայտնի շինարարական տեխնոլոգիայով: Իրականացման համար կիրառվելու են արտերկրյա գործընկերներ: Հավանական կապալառուն կընտրվի նախագծման երկրորդ, աշխատանքային փուլում, մասնավոր տեղեր-մրցույթի արդյունքում, որից հետո կարելի կլինի առավել մանրամասն նկարագրել կիրառվող կոնստրուկտիվ համակարգը, քանզի յուրաքանչյուր պոտենցիալ կապալառու ունի իր սեփական ինժեներատեխնիկական մշակումները և լուծումները:

1.4.5 ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆ

Ծավալատարածական և ճարտարապետական լուծումներ

Ավտոկայանատեղին կոչված է ծառայել նախագծվող բազմաֆունկցիոնալ կենտրոնի հյուրերին, սպասարկող անձնակազմը և լրացնել Կոմիտասի պողոտայում առկա ավտոկայանատեղիների պակասը:

1692 քմ մակերեսով կառույցն ունի 43 մետր լայնություն և 50 կայանատեղի: Կառույցն ունի 8-10 մետր թռիչքներով հաճախակող կարկասային համակարգ: Մեծ թռիչքները թույլ են տալիս ստեղծել հնարավորինս հարմարավետ կայանատեղիներ, ապահովելով թե՛ ավտոմեքենաների հարմար և արագ ելումուտը, թե՛ մակերեսի բարձր ՕԳԳ-ն:

Ավտոկայանատեղի և բազմաֆունկցիոնալ կենտրոնի միջև նախատեսվում է օժանդակ շինություն: Այս մասում նախատեսված է մոտ 175 քմ մակերեսով ինժեներատեխնիկական բլոկը, որի վերևի հարկում նախատեսվում է տեղակայել օդափոխության, սառեցման արտաքին համակարգերը և այլ արտաքին ինժեներական սարքավորումներ, իսկ ներքևի հարկը օգտագործել որպես այցելուների և աշխատակիցների, ինչպես նաև մանր բեռների առաքման համար առանձնացված միջանցք- կապ ԲԿ-ի առաջին մասնաշենքի հետ:

Կառույցը նախատեսվում է իրականացնել այգու միջին հողի վերին նիշից մոտ 7 մետր խորության վրա: Շինությունն ունի 3,5 մետր բարձրություն, և գտնվելով հողի մակերևույթից միջինը մոտ 7 մետր խորության վրա, հնարավորություն ունի ծածկի վրա հողի շերտի հետ լիցքի մինչև 3 մետր հաստությամբ: Ապահովելով նման հաստության

հողի ծածկույթ, հնարավորություն է ստեղծվում վերականգնել կանաչ գոտին, նախատեսելով ոչ միայն թփեր այլև ոչ շատ խորը արմատներով ծառատեսակներ:

Հյուսիսային մասում հողի շերտը հասնում է մինչև 3 մետրի, ինչը թույլ է տալիս նախատեսել այս մասում գրեթե ցանկացած տեսակի ծառեր, բացառությամբ խոր արմատներով տեսակները: Հարավային մասից հողի շերտը հասնում է մոտ 60-80 սմ-ի, ինչը հնարավորություն է ընձեռում նախատեսել զենիթային, բնական լուսավորություն և հակահրդեհային ծխատարներ: Կանաչ գոտին վերականգնելու համար այս մասում կնախատեսվեն փոքր թփեր, ծաղիկներ, սիզամարգ և մանկական հրապարակներ:

Կոնստրուկտիվ լուծումներ

Կառույցը առաջարկվում է իրականացնել երկաթ/բետոնե հաճախակող կարկասային, 8-10 մետր թռիչքներով համակարգի միջոցով: Համեմատաբար մեծ թռիչքները թույլ են տալիս բարձրացնել ավտոկայանատեղիի ՕԳԳ-ն՝ առավել հարմար և արագ դարձնելով ավտոմեքենաների կայանումը, ել ու մուտը: Մեծ թռիչքների, ինչպես նաև նախատեսվող խոնավ հողի ստվար շերտի բեռը հաշվի առնելով, առաջարկվում է կեսոնային, հաճախակող համակարգ՝ առավել բարձր ամրության ցուցանիշներին բավարարելու նպատակով:

Արևելյան մասում շինությունն ունի երկհարկանի սեղանաձև երկհարկանի կից կառույց առանձնացված սեյսմիկ կարաններով, թե՛ ավտոկայանատեղիի հիմնական ծավալից, թե՛ բազմաֆունկցիոնալ կենտրոնից:

1.4.6 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ՏՏ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Ծավալատարածական և ճարտարապետական լուծումներ

Զարգացման կենտրոնը, 3200 քմ. մակերեսով, երկհարկանի սեգմենտաձև շինություն է, այգու հյուսիսային հատվածում: Առանցքային ընդհանուր չափերն են 27 x 57 մ: Առաջին հարկը ունի 4,55 մետր բարձրություն, երկրորդը՝ փոփոխական, առավելագույնը 4,55 մետր: Որպես 0.000 նիշ ընդունված է առաջին հարկի մաքուր հատակի նիշը: Կառույցի առավելագույն բարձրությունը 9,20 մետր է: Ջրահեռացումը ներքին է: Արտաքին պատերը - օդափոխվող ճակատ սկզբունքով, հարդարված մեծածավալ կվարցային պանելներով:

Շինությունը բաղկացած է հինգ հիմնական մասերից: Մանկապատանեկան տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման կենտրոնը, որը գտնվում է երկրորդ

հարկում և ունի կազմակերպված առանձին մուտք այգու կողմից, սրճարան-վաճառասրահը գտնվում է առաջին հարկի արևմտյան կողմում և ունի առանձին կազմակերպված ելումուտ այգու հրապարակի արևմտյան կողմից և ծառայողական ու բեռների համար հյուսիսային կողմից: Մանրածախ առևտրի սրահները նույնպես առաջին հարկում են, հրապարակի հարավային և հարավ-արևմտյան մասում: Առաջին հարկում է գտնվում նաև մանկապատանեկան երաժշտական կենտրոնը, կառույցի արևելյան մասում, ամֆիթատրոնի անմիջական հարևանությամբ: Կառույցը ունի կանաչ, շահագործվող տանիք և լայն ու հարմարավետ տեռասներ, ինչպես բացօդյա միջոցառումներ, այնպես էլ դասընթացներ կազմակերպելու համար: Կանաչ տանիքին և տեռասներին արևելքից ինտեգրված է բացօդյա ամֆիթատրոնը:

Շինության հիմնական ծավալատարածական հորինվածքային տարրն է կրկնակի կորույթյան, պարամետրիկ, կանաչ և շահագործվող տանիքը: Տանիքը ունի ընդգծված թեքություն դեպի արևելք և հարավ-արևելյան կողմից լծորդվում է այգու ճեմուղուն և դառնում նրա տրամաբանական շարունակությունը, իսկ մյուս, հյուսիս-արևելյան կողմից ինտեգրվում ամֆիթատրոնի հետ: Հանդիսանալով ըստ էության կառույցի “հինգերորդ ճակատը” ծածկը իր վրա է վերցնում կառույցի կերպարաստեղծ հորինվածքային տարրի դերը և մինևույն ժամանակ համահունչ է հարևան հասարակական կենտրոնի վեղարի ճարտարապետական ոգուն:

Կոնստրուկտիվ լուծումներ

Կառույցը նախատեսվում է իրականացնել մետաղական կառկասային կոնստրուկցիաներով: Առավելագույն թռիչքը 10 մետր է, քայլը 9 մետր: Կրկնակի կորույթյան ծածկը նախատեսվում է իրականացնել պարամետրիկ սկզբունքով, ծածկի սալը՝ բազմանկյուն սեգմենտաձև հարթ տարրերով, իսկ առավել սահուն լծորդված կորությունը ստանալ հողի և դրենաժի համապատասխան շերտերի միջոցով:

Տարածքում առկա կրպակաշարերը համաձայն Երևան համայնքի կողմից տրամադրված քանդման թույլտվության ապամոնտաժվել են:

Տեխնիկական ցուցանիշներ:

Այգու վերակառուցման և հասարակական, զարգացման կենտրոնի կառուցման հողամասի մակերեսը -1.002829 հա;

- Կառուցապատման մակերես – 1238քմ
- Կանաչապատման մակերես – 5234 քմ;
- Մայթ, ճեմուղի և այլ (Ջրաթափանց մակերես) – 3556.29 քմ;

Բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման հողամասի մակերեսը – 0.2016 հա

- Կառուցապատման մակերես – 0.2016 հա

Ստորգետնյա կայանատեղիների – 1692քմ – 50 կայանատեղի

- Հողամասի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի;
- գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Ընդհանուր օգտագործման;
- գրանցված իրավունքի տեսակը՝ հողամասի կառուցապատման իրավունք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարզի ցանքս կտկվեն ծառեր և թփեր:

Էներգախնայողության և Էներգաարդյունավետության հետ կապված միջոցառումներ

Համալիրի էներգաարդյունավետությունը նախատեսվում է համապատասխանեցնել ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին, ինչի ուղղությամբ իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններ և վիտրաժներ, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացում:

Ջերմության խնայողության համար ընտրված են ջերմաօգտահանիչներով օդի ներածման համակարգեր, որոնք ապահովում են ջերմության բարձր խնայողություն:

1.4.7 Տեղամասի երկրաբանա-լիթոլոգիական կառուցվածքը

«ՀԱՅՐ և ՈՐԴԻ ՏԻՏԻՉՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ճարտարագետ-երկրաբանի կոորդինացմամբ և ղեկավարմամբ համապատասխան ՀՀՇՆ-1-2,01-99-ի, ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան Կոմիտասի պողատա 49/9, 49/10 հասցեներում այգու վերակառուցման և բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման տարածքի ինժեներաերկրաբանական կառուցվածքի պարզաբանման նպատակով իրականացվել են ճարտարագիտաերկրաբանական ուսումնասիրություններ:

- Աշխատանքները իրականացվել են «ՀԱՅՐ և ՈՐԴԻ ՏԻՏԻՉՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի և «ՀԱՅԿ-88» ՍՊԸ-ի միջև կնքված Ա-59 պայմանագրի շրջանակներում: Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան Կոմիտասի պողատա 49/9, 49/10 հասցեներում այգու վերակառուցման և բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման տարածքի նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ճարտարագիտաերկրաբանական հետազոտություններ.

1. Ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը: Նշված և հարակից տարածքներին վերաբերվող տարբեր աղբյուրներում զետեղված, նախկինում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների հավաքում, կանոնակարգում, համադրում և վերլուծություն:
2. Տեղադիտական հետազոտություններով վեր հանելու համար վտանգավոր երկրաբանական երևույթները և պրոցեսները /սողանք, քարաթափում, ճահճացում և այլ/:
3. Հորատանցքներով աշխատանքներ՝ նշված հրապարակներում լիթոլոգիական կտրվածքները, գրունտերի շերտերը ու նրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը, որոշելու նպատակով:
4. Օգտագործել այս տարածքում նախկինում կատարված լաբորատոր նյութերը կախված լիթոլոգիական կտրվածքների առանձնահատկություններից:

5. Նախկինում կատարված խախտված և բնական կառուցվածքի գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ամփոփում:
6. Դաշտային և ֆոնդային նյութերի կամերալ մշակում:

Վերը շարադրված աշխատանքների իրականացման արդյունքում կազմվել է տեղանքի ինժեներաերկրաբանական պայմանների մասին եզրակացություն:

Քանի որ տեղանքը իրենից ներկայացնում է ըստ ՀՀՇՆ-1-2,01-99- ինժեներաերկրաբանական պայմանների II-րդ միջին բարդության կարգի տեղամաս, ուստի հորատանցքները ընտրվել են առավել նպաստավոր տեղերում, որպեսզի առավելագույն հնարավոր լինի բացահայտել գեոմորֆոլոգիական սահմանները:

Աշխատանքները տարածքում կատարվել են 2021 թվականի ապրիլ ամսին:

ՄԴԵ-50M հաստոցով, մեխանիկական չոր եղանակով փորվել է 4 հատ հորատանցք՝ երկուսը՝ 16 մետր խորությամբ, երկուսը՝ 13 մետր խորությամբ, ընդհանուր 58 մետր ծավալով: Հորատանցքների հիման վրա կազմվել է երկրաբանա-լիթոլոգիական կտրվածք, ինչպես նաև օգտագործվել են ֆոնդային տվյալները: Հորատանցքների արդյունքները և ֆոնդային նյութերի տվյալները թույլ են տալիս շերտերի նկարագրությունը տալ մինչև 16,0 մետր խորությամբ՝ համաձայն ըստ ՇՆՁ I-2.101-2002 (ձեռնարկ ՀՀՇՆ I-2.01-99 նորմերի):

Իրականացված աշխատանքների հիման վրա տեղամասի ինժեներա-երկրաբանական կառուցվածքում առանձնացվել են գրունտների հետևյալ տարատեսակները՝

Շերտ 1

Խճային գրունտ, ավազակավային լցոնի մինչև 15-20% պարունակությամբ տեղ-տեղ նաև բազալտի լցոնով: Գրունտը թույլ խոնավ է, լցոնը՝ շագանակագույն և պինդ թանձրության, Դեյուվիալ- պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆՊ IV-5-82-ի III կարգ է:

Շերտ 2

Բազալտ ամուր, մոխրագույն, բեկորային անջատումներով թույլ ծակոտկեն և հոծ, տեղ-տեղ խոռոչավոր, խճայնացված: Նեոգեն ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքեր: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՆՊ -IV- 5-82-ի VII կարգ է:

Շերտ-3

Խարամացված բազալտներ կարմրավուն և մոխրագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, բազալտների խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են: Գրունտներն ըստ շահագործման դժվարության համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի III կարգ է:

Շերտ-4

Բեկորային բազալտ ամուր, մոխրագույն, կապտամոխրագույն, ծակոտկեն տեղ-տեղ խոռոչավոր ճեղքավորված: Շերտում լցանյութը ավազակավային է 10-15%:

Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՀՈՒ IV-5-82-ի V կարգ է:

ԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.


Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ ք. Երևան Արաբկիր վարչական շրջան Կոմիտասի պողատա 49/9, 49/10 հասցեներում այգու վերակառուցման և բազմաֆունկցիոնալ կենտրոնի կառուցման տարածքում:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1168.0-1184.0 մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են գրունտների 4 տարբեր շերտեր, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են 3-րդ աղյուսակում:
- Տեղամասում մինչև 16 մետր խորությամբ փորված հորատանցքներում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:
- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, ապահովելով գրունտների միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է շերտ 2-ը / բազալտներ/ շերտ 3 /խարամացված բազալտներ/, շերտ 4 /բեկորային բազալտներ/ որոնց սեյսմիկ հատկությունները բերված է աղյուսակ 3-ում:
- Գրունտների սեյսմիկ հատկությունները ճշգրտելու համար խորհուրդ է տրվում կատարել երկրաֆիզիկական հետազոտություններ:
- Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի Երևան քաղաքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկայնություն:


- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,6 մետր:
- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:
- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:


Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան եզրակացությունը պարտադիր է:






- Բնակելի բազմաշարյա շենքեր (սոսնիս շարքի շարքի շարքի)
- Բնակելի բազմաշարյա շենքեր
- Բնակելի տիպի շարքի շարքի շենքեր
- Բնակելի տիպի շարքի շարքի շենքեր (սոսնիս շարքի շարքի)
- Երևանի շարքի շարքի շենքեր
- Բնակելի սաղարթաշարյա շենքեր
- Հանգիստի տեղեր
- Կարգավորված կառույցներ
- Արհեստագործական շենքեր
- Կրթական շենքեր
- Սպորտի կենտրոններ
- Կոմունալ-կենտրոնական շենքեր
- Ազատության տեղեր
- Ազատության տեղեր
- Մանրամասն առևտրի կենտրոն (մասնավոր)
- Առևտր-կենտրոնական կենտրոններ
- Մեծ կենտրոն
- Բնակելի կենտրոն
- Հանգիստի կենտրոն
- Արհեստագործական կառույցներ (շարքի)
- Լեզու, Կիսակենտրոն
- Դիտարկվող տարածք









Շինարարական մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

Շինարարության նորմատիվ տնտղությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II, հետև հիման վրա հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Օբյեկտի ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տնտղությունը ծրագրվում է 36,0 ամիս կամ 3 օրացուցային տարի շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից:

29

1.4.3 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռուցի գործողության գոտում կատարվելիք շինմոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից:

Շինհրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգներով:

Շինհրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Հետիոտների անվտանգությունը ապահովելու նպատակով շինհրապարակը անհրաժեշտ է ցանկապատել 2.5 մ բարձրությամբ թիթեղով, մարդկանց անցման հատվածներում անվտանգության նկատառումներով պայմանավորված նախատեսել թիթեղյա ծածկոց:

Մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի պահանջը ապահովելու նպատակով շինարարության ընթացքում շենքերի արտաքին մասը ծածկել անթափանց թաղանթով:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում պայթեցման աշխատանքներ չեն նախատեսվում:

1.4.4 Առաջարկություններ օբյեկտի շինարարության կազմակերպման վերաբերյալ

Շինարարությունը ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով: Գլխավոր կապալառու կազմակերպությունը որոշվելու է մրցույթով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շենքերի, ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կարելի է իրականացնել ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Ժամանակավոր շինությունների, վերամբարձ կռունկի, պահեստավորման մակերեսների տեղակայումը պատկերված է շինարարական գլխավոր հատակագծի վրա:

Առաջարկվում է հնարավորինս օգտագործել գույքային շարժական շինություններ:

Ժամանակավոր շինությունների ցանկը և դրանց տեղակայումը ցանկալի է լրացուցիչ ճշտվեն տեղում և համաձայնեցվեն պատվիրատուի հետ:

1.4.5 Առաջարկություններ օբյեկտի շինարարության մատակարարման կազմակերպման վերաբերյալ

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական ինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի մոտակա բետոնաշաղախային հանգույցներից մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Առաքումը ծրագրվում է այնպիսի պարբերականությամբ, որ ապահովվի աշխատանքների անընդհատությունը:

Առաջարկվում է շինարարության նյութատեխնիկական մատակարարման հետևյալ սխեման.

- Առանձին ամրանային ձողերը և հիմնակմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով բերվում են անմիջականորեն շինարարական հրապարակ, որտեղ կատարվում է դրանց պահեստավորում և տեղադրում,
- Բետոնային խառնուրդը միաձուլվ բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների համար, ինչպես նաև շաղախը շարվածքի համար առաքվում են անմիջապես շինհրապարակ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով,
- Հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:
Փոխադրամիջոցների և շինարարական մեքենաների տեխնիկական սպասարկումը և լիցքավորումը իրականացվելու է շինհրապարակից դուրս մասնագիտացված կետերում: Տարածքում քայուղեր և վառելանյութ չի պահեստավորվելու :

Շինարարությունը կիրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից :

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան


2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:


3. Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում

պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4. Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության տարածք շինհրապարակի կազմակերպման հատակագիծ





1.4.6 Կադրային ապահովում և շինտեխնիկա

Շինարարությունում աշխատողների ընդհանուր թիվը՝ 80 մարդ, որից

Ինժիներատեխնիկական անձնակազմ - 5 մարդ

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է ստորև:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

NN	Անվանում	Մակնիշ	Քանակ
1	Ավտոմոբիլային վերամբարձ կռունկ	XCMG QY25 K	2
2	Ավտոմոբիլային վերամբարձ կռունկ	KC-45717K-1	1
3	Էքսկավատոր՝ կախովի սարքավորումներով	JCB JS130LC	3
4	Բուլդոզեր	CAT D9 GC	2
5	Գլղոն	CAT CB7	1
6	Ավտոբետոնապոմպ	SCHWING S36 SX	2
7	Թրթռիչ մակերեսային էլեկտրական	ИБ-91А	3
8	Թրթռիչ խորքային էլեկտրական	ИБ-102А	6
9	Փոխարկիչ թրթռիչների համար	ИБ-4	3
10	Դակիչ ձեռքի էլեկտրական	ИД-4709А	3
11	Եռակցման տրանսֆորմատոր	ТД-500	3
12	Տոփանիչներ պնևմո և ձեռքի		10
13	Փոքր մեքենայացման միջոցներ	կոմպլեկտ	6
14	Ավտոինքնաթափ		ըստ հաշվարկի
15	Ավտոբետոնախառնիչ	СБ69Б	ըստ հաշվարկի

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ մասնագիտացված սպասարկման կետերում:

1.4.7 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ եւ այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ եւ կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր եւ այլն: Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու եւ կենցաղային նպատակների համար:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում, կենցաղային աղբն է տարեկան մեկ մարդու հաշվարկով 70 կգ $80 \times 70 \times 3 / 1000 = 16.8$ տ եւ շինարարական աղբն է 1800 խմ ծավալով, այդ թվում տարածքում առկա շինությունների քանդումից առաջացող: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 75 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 1080 օր

$$W_{\text{խ.տ.}} = (5 \times 0.016 + 75 \times 0.025) \times 1080 = 2111 \text{ խմ/շին. ժամ.}:$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1000 քմ,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 խմ,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 1080

$$U_1 = 1000 \times 0.0015 \times 1080 = 1620 \text{ խմ/շին. ժամ.}:$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3731 խմ/շին. ժամ:

Հասարակական կենտրոնի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը նախատեսվում է Կոմիտաս փողոցով անցնող D=400մմ տրամագծով խողովակից, ջրահեռացումը D = 400մմ տրամագծի խողովակով Կոմիտաս փողոցով անցնող D=300մմ ջրագծից, հեղեղատար Կոմիտաս փողոցով անցնող D=700մմ հեղեղատարին:

Շինարարության փուլում ջրցանի համար ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով՝ ավտոցիստեռներով, Երևան քաղաքի ոռոգման ջրի ցանցից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Էլեկտրամատակարարումը համաձայն գործող պայմանագրի:

Համալիրում նախատեսվում է իրականացնել անհատական օդափոխման և ջեռուցման համակարգ որոնց արտաքին բլոկները նախատեսվում է քողարկել հատուկ դրանց համար նախատեսված խորշերում և համապատասխան ձայնամեկուսիչ նյութերի օգտակործմամբ նախատեսվում է ապահովել աղմուկի ցածր մակարդակ:

2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 ՖԻԶԻԿԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախագծվող կառույցը գտնվում է Երևանի Արաբկիր համայնքում: Արաբկիրը սկզբնապես եղել է առանձին բնակավայր, որի համար 1929թ. Ալ. Թամանյանի կողմից մշակվել է գլխավոր հատակագիծ: Ըստ այդ նախագծի Արաբկիրը իրենից ներկայացնում էր ռանձին, անհատական տներով կազմակերպված քաղաքաշինական միավոր: Այն տեղակայված էր ներկայիս համայնքի կենտրոնական մասում, ուներ կենտրոն, օղակաձև զբոսայգի, երկրորդական կենտրոններ և շրջապատված էր ծառաստանով: Բնակավայրը երեք հիմնական փողոցներով կապվում էր Երևան քաղաքի հետ: Դրան հաջորդող քաղաքաշինական փաստաթղթերն արդեն մշակվել են Երևանի գլխավոր հատակագծերի շրջանակներում և փոխկապակցված են եղել քաղաքի հատակագծային մյուս շրջանների հետ:

1938թ. գլխավոր հատակագծի առանձնահատուկ գաղափարներից են եղել.

- Կամրջով Բաղրամյան փողոցի միացումը Աջափնյակին:
- Երկաթգծի երկայնքով ընդարձակ կանաչապատ գոտու ստեղծումը:
- Հյուսիսային առանցքի շեշտումը, որի միջոցով կանաչ գոտին միանում է ձորի համակարգին:

1972թ. գլխավոր հատակագծում.

- Հյուսիսային ճառագայթի գաղափարն ավելի ակնառու է, այստեղ ավելանում է հասարակական կենտրոնը (տե՛ս՝ Հյուսիսային առանցքի վրա առկա հրապարակները, ծավալատարածական դոմինանտները, հուշարձանները և իրականացման ժամանակացույցը)
- Հյուսիսային առանցքը այս հատվածում շեշտվել է ծառուղիով, որը սկսվելով գիտահետազոտական չորս Բարձրահարկ կառույցների մոտից, հասնում է մինչև Նաիրի Զարյան փողոց: Քաղաքաշինական գործառնական առումով գոտին մի կանաչապատ առանցք է, որը կապում է Կոմիտասի պողոտան և Նաիրի Զարյան փողոցը և համայնքի համար հանդիսանում է կանաչապատ, ռեկրեացիոն միջավայր:

Համաձայն Արաբկիր համայնքի ներկա գոտևորման նախագծի՝ համայնքի առաջնային հրատապ խնդիրներից են հասարակական և կանաչապատ վայրերի ստեղծումը:

Ժողովրդագրական կազմ ու բնակչություն

Երևան, քաղաք տեղակայված է Հրազդան գետի երկու ափերին: Հանդիսանում է պետության մայրաքաղաքն ու խոշորագույն բնակավայրը, վարչաքաղաքական, տնտեսական կենտրոնը: Համաձայն Հայաստանի պաշտոնական տեղեկատվության՝ 2014 թվականի հունվարի մեկի դրությամբ ունի 1.068.000 բնակիչ: Բնակչությունը աշխատում է արտադրական, էներգետիկ և այլ օբյեկտներում: Իրականացվում են մեծ ծավալի քաղաքաշինական ծրագրեր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում՝ բեռնաթափվելով Հրազդան գետի հովտում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Արաբկիր համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ մեր ուսումնասիրվող տարածքում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանում բնորոշվող ռելիեֆային հիմնական տարրերն են Կոտայքի հրաբխային սարավանդի լանջերը, որոնք հատվում են Հրազդան գետի կիրճի զառիթափ լանջերով: Նախագծվող տարածքը ներկայացնում է հրաբխային դելյուվիալ լանջի մի հատված, որտեղ ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1168.0-1184.0 մետրերի սահմաններում:

Տարածքում բնության և պատմամշակութային հուշարձաններ չկան: Մոտակայքում մակերևութային ջրային ռեսուրսներ չկան: Տարածքը կառուցապատված է:

Արաբկիր վարչական շրջանում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկ

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Ամրոց Չորաբերդ	մ.թ.ա. 2 հզ	Քեռու փող.
Քարայր-կացարան «Նոր Արաբկիր-1», («Չորաբերդ-1»)	մ.թ.ա. 2 հզ, 14-17 դդ.	
<u>Ինստիտուտի համակառույց. Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը</u>	1968 թ.	Ազատության պող. 26
Հուշարձան Արմենակ Մնջոյանի	1973 թ.	
Խճանկարներ «Ներփակ կորեր». «Երկրաչափական տարածություն»	1970 թ.	Հ. Հակոբյան փող. 3
<u>Կամուրջ Հրազդան (Հրազդանի մեծ կամուրջ), (Կիկյան կամուրջ)</u>	1956 թ.	Կիկյան և Լենինգրադյան փող. միջև
Հիդրոէլեկտրակայանի շենք. Քանաքեռի Հ. Տեր-Աստվածատրյանի անվան Հէկ-ը	1936 թ.	Հրազդանի ձախ ափին, Քանաքեռի ձորում
Հուշարձան Հովսեփ Տեր-Աստվածատրյանի	1966 թ.	
Հուշահամալիր «Նոր Արաբկիր» («Վերածնունդ»)	1985 թ.	Արաբկիր զբոսայգի
Հուշադրվուր Նոր Արաբկիրի 50-ամյակին	1975 թ.	<u>Կոմիտասի պողոտա 19</u>
Հուշարձան Ղազարոս Աղայանի	1955 թ.	Կիկյան փող. 9
Հուշարձան Նաիրի Զարյանի	1974 թ.	Հ. Հակոբյան փող. նրբ 3
Հուշարձան Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակին	1967 թ.	Ազատության պող.
Հուշարձան «Մուսա-կիբեռնետիկա»	1972 թ.	Հ. Հակոբյան փող. 3
Հուշարձան Ալեքսանդր Շիրվանզադեի	1958 թ.	Վաղարշյան փող. 24/17
Հուշարձան Ռուբեն Սևակի	1995 թ.	Բաբայան փող. 40
Հուշարձան «Վահագն Վիշապաքաղ»	1985 թ.	Վաղարշյան փող. 12
Հուշարձան Լև Տոլստոյի	1982 թ.	Ազատության պող. 5
Հուշարձան Բաֆֆու	1987 թ.	Կոմիտասի պող. 37
Հուշարձան Լևոն Օրբելու	1973 թ.	Օրբելի եղբայրների փող. 22
Մշակույթի տուն «Կանաչ»	1958 թ.	Ազատության պող. 19

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Զրանցք՝ Դալմայի	մ.թ.ա. 8-7 դդ.	Հրազդանի աջ ափին
Փողոցի կառուցապատում. Կիկյան փողոցը	1951-1953 թթ.	Կիկյան փող.
Քարայր-կացարանների համալիր Քանաքեռի	մջնդ	Հրազդանի կիրճի ձախ ափին, Քանաքեռ Հէկ մոտ
Քարայր-կացարան «Արաբկիր-11», («Նոր Արաբկիր-2»)	16-17 դդ.	Հրազդանի ձախափնյա գառիթափին, Դավիթաշենի կամրջի մոտ
Քարայր-կացարան «Քանաքեռ-4», («Նոր Արաբկիր-3»)	16-17 դդ.	Հրազդանի ձախափնյա գառիթափին, Քանաքեռի այլումինի գործարանի մոտ
Քարայր-կացարան «Քանաքեռ-5»	մջնդ	Հրազդանի ձախ ափին
Քարայր-կացարան «Քանաքեռ-7»	մջնդ	Հրազդանի աջ ափին
Քարայր-կացարան «Քանաքեռ-8»	մջնդ	Հրազդանի աջ ափին
Քարայր-մատուռ «Քանաքեռ-2»	մջնդ	Հրազդանի ձախ ափին

Երևան քաղաքի բնության հուշարձանների ցանկ

1	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
2	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, երոզիոն-դենուդացիոն

մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

2.2 ԿԼԻՄԱՆ

Ընդհանուր առմամբ Երևանի կլիման արտահայտված ցամաքային բնույթ է կրում՝ շոգ և չոր ամառներին հաջորդում են չափավոր ցուրտ, անկայուն ձնածածկով ձմեռները: Կլիմայի առանձնահատկությունները պայմանավորված են. ամռանը՝ հարավից՝ չոր տաք օդային զանգվածների, ձմռանը՝ հյուսիսից՝ ցուրտ օդային զանգվածների ներխուժումով:

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Երևան-«Արաբկիր» օդերևութաբանական կայանի տվյալների:

Ջերմաստիճանի բացարձակ մինիմումը ոչ ցածր է քան -30°C , բացարձակ մաքսիմումը հասնում է $+42^{\circ}\text{C}$: Օդի միջին ջերմաստիճանները ըստ ամիսների Երևան քաղաքի հարավային արդյունաբերական շրջանի համար բերված են աղյուսակ 2.1-ում «Շինարարական կլիմատոլոգիա» СНиП II-7.01-96 տվյալների համաձայն:

Աղյուսակ 2.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդերևութա- բանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	1113	-2.9	-0.8	5,1	11.8	16.3	20.8	24,5	24.2	19.9	13,1	6.4	0.1	11,5	-21	41

Աղյուսակ 2.2. Օդի հարաբերական խոնավությունը Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութա- բանական կայան	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
														հունվարին	օգոստոսին
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Երևան	77	73	61	57	59	53	49	50	51	60	70	76	61	69	35

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային տեղումները Երևան "Արաբկիր" օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Տարեկան	Ձնածածկույթ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ													Առավելագույն տասնօրյակա-յին բարձրությունը,սմ	Տարվա մեջ ձնածածկություվ օրերի քանակը	Չյան մեջ ջրի Առավելա-գույն քանակը,մմ
	Ըստ ամիսների															
28	31	38	48	55	29	16	8	11	31	30	28	353				
Երևան	22	28	26	34	47	47	34	22	47	34	30	26	47	50	53	152

Աղյուսակ 2.4 Քամի

Բնակավայր, օդերևույթաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնճում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագություն, մ/վ								Անհողությունների կրկնելիություն, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-Արևելյան (ՀվԱրմ)	Հարավ (Ավ)	Հարավ-Արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
Երևան «Արաբկիր»	889,7	հունվար	13	29	8	7	14	20	6	3	45	0,9	2,0	30	20	23	25
			1,9	1,9	1,6	1,7	1,8	1,5	1,8	1,9							
		ապրիլ	15	29	6	8	12	17	9	4	15	2,1					
			3,1	2,6	2,3	2,2	2,5	2,4	2,5	2,5							
		հուլիս	28	32	3	3	8	16	7	3	13	3,4					
			6,0	4,8	1,7	1,7	1,7	1,7	2,0	2,6							
		հոկտեմբեր	17	37	6	5	10	16	6	3	19	1,8					
			2,9	2,5	2,0	1,9	1,7	1,9	1,9	2,0							




2.3 Օդային ավազան

Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության “Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն” ՊՈԱԿ կողմից:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ նմուշառում, իսկ մնացած 3 դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

Երևան քաղաքում որոշված աղտոտիչների միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



2.4 Ջրային ռեսուրսներ

«Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշմամբ ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի քիմիական որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով:

ՀՀ տարածքում ջրերի կառավարումը կատարվում է 6 գետավազանային կառավարման տարածքների միջոցով:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը նույնպես պարբերական մոնիթորինգի է ենթարկվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի տվյալները 2019 թվականի (վերջին տարեկան տեղեկանք) ամփոփ տեղեկանքից բերված են ստորև:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Հրազդան գետի գետի վերին ջուրը «միջակ» որակի է (3-րդ դաս): Արգնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում /Երևանից ներքև/ ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս): Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է՝ (5-րդ դաս): Վատ որակը պայմանավորված է լուծված թթվածնի, ԹԿՊ, ամոնիում իոնի, ֆոսֆատ իոնի, մանգանի, վանադիումի, ընդհանուր ֆոսֆորի բարձր պարունակությամբ:

Նախատեսվող գործունեությունը ջրային ավազանի աղտոտվածությունը չի ավելացնի, քանի որ նախատեսված են անհրաժեշտ միջոցառումներ հնարավոր ազդեցությունների նվազեցմանն ուղղված:

2.5 Հողերի նկարագիրը

Հողերը

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- ❖ Բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած
- ❖ Կիսաանապատային գորշ խճաքարային տեղ-տեղ կարբոնատային
- ❖ Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:

2.6 Հիմնային աշխատանքներ

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 46000 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ հանվող 37000 խմ ծավալով զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

2.7 Կենսաբազմազանություն

Բուսական աշխարհ: Նախատեսվող գործունեության տարածքը բուսաաշխարհագրական տեսակետից պատկանում է Երեւանի ֆլորիստիկ շրջանին, որին սովորաբար յուրահատուկ են կիսաանապատային եւ անապատային բուսածածկույթը, տարածքի հարեւանությամբ հանդիպող սակավ բուսատեսակները հիմնականում քսերոֆիտներ (չորասերներ) են: Ընդհանուր առմամբ, Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, քսերոֆիտ, օշինդրային կիսաանապատների բուսածածկ ոչ բնակելի, ոչ արտադրական, բնական բուսածածկով տարածքներում կարող է աչքի ընկնել տեսակային հարուստ բազմազանությամբ: Որպես կանոն, այս տեսակները տարածված են ոչ աղակալված, մակերեսային քարքարոտ գորշ հողերի վրա եւ ներկայացված են օշինդրաէֆեմերային-կիսաանապատային եւ հալոֆիլ-անապատային տիպերով: Օշինդրային կիսաանապատների հիմնական բաղադրիչը օշինդր բուրավետն է (*Artemisia fragrans*), որը մինչեւ 50 սմ բարձրության, փայտացած առանցքով կիսաթփիկ է: Այն զարնանը եւ ամռանը պահպանում է իր մոխրագույն տեսքը, աշնանը ծածկվում է մանր դեղին ծաղիկներով: Գարնանը այդ թփերի միջ եւ ընկած տարածությունը զբաղեցնում են էֆեմերները՝ *Ceratocephalus falcatus*, *Ziziphora tenuifolia*, *Ziziphora persica*, *Alyssum desertorum*, *Poa bulbosa*, *Bromus tectorum*, *Lepidium vesicarium* տեսակներով: Հունիսի կեսերին, տեղումների քանակին նվազեցման եւ օդի ջերմաստիճանի բարձրացման հետ այս տեսակները չորանում են: Սակայն աշնանը տեղումների ավելացման հետ մեկտեղ օշինդրային անապատները վերակենդանանում են, ծաղկում են՝ օշինդրը (*Artemisia*), *Kochia prostrata*, *Noaea mucronata* եւ այլ բուսատեսակներ: Ուշ աշնանը եւ ձմռանը հողը ծածկվում է աճող էֆեմերների կանաչ գորգով: Երեւանի ֆլորիստիկ շրջանին բնորոշ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝ *Acorus calamus* L. (Խնկեղեգճահճային), *Lepidium lyratum* L. (Նվարդակքնարածեւ), *Salsola tamamschjanae* Iljin (Օշան Թամամշյանի), *Astragalus paradoxus* Bunge (Գազտար օրինակ), *Glycyrrhiza echinata* L. (Մատուտակ խոզանավոր), *Rhizoccephalus orientalis* Boiss. (Արմատագլխիկ արեւելյան): Նշված բուսատեսակները հանդիպում են Երեւանի ֆլորիստիկ շրջանում, սակայն ծրագրի համար նախատեսված տարածքներում տարածման արեւալներ չունեն: Նախնական ուսումնասիրությունների եւ գրականական տվյալների նույնականացման

արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Կենդանական աշխարհ: Նախատեսվող գործունեության հարակից տարածքներին էլ ընդհանուր լանդշաֆտային գոտուն բնորոշ կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ *Microtus arvalis* Pall. (դաշտամուկ), մի քանի տեսակ չղջիկներ՝ *Nyctalus noctula* (շեկիրիկնաչղջիկը), *Vespertilio ognevi* (Օգնեւիմաշկեղը), միջատակերներ (Hemiechinus auritus, *Mustela nivalis*): Անողնաշար կենդանատեսակներից տարածաշրջանում հանդիպում են՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիղներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Amphicoma eichleri*, *Cantharis araxicola* (բզեզներ), *Zodarion petrobium* (սարդեր): Կարիճներից հանդիպում է միայն *Buttus caucasicus*-ը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածից դուրս բնական, տնտեսական գործունեության մեջին տեսիվ ներգրավվածություն չունեցող տարածքներում Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից կաթնասուններից կարող են հանդիպել *Rhinolophus Mehelyi* (Մեհելիի պայտաքիթ), (*Barbastella leucomelas*.) Ասիական լայնական չղջիկ, (*Miniopterus schreibersi*) Սովորական երկարաթև չղջիկ: Թռչուններից՝ (*Circaetus galicus galicus*) Եվրոպական օձակերը, (*Merops superciliosus persicus*) Պարսկական կանաչ մեղվակերը, (*Sylvia nisoria nisoria*) Եվրոպական ճուռական մանշահրիկը, (*Luscinia svecica occidentalis*), Իրանական կապտափողը, (*Remiz pendulinus menzbieri*) Իրանական սովորական ճոճհավը եւ այլն, սողուններից՝ (*Eumeces schneideri*) Երկարաթև սցնիկը, (*Mabuya aurata*) Ոսկեգույն մաքույա, (*Elaphe hohonaekeri*) Անդրկովկասյան սահնօձ:

2.8 Թափոնների կառավարում

Երևանի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 16.8 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1800 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, այդ թվում տարածքում առկա արտադրական և օժանդակ շինությունների քանդումից առաջացող, ամբողջությամբ

տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր՝ Էրեբունի վարչական շրջանի նուբարաշենի խճուղի 4 հասցեում գտնվող տարածք:

Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 31401100 08 99 5) 37000 իսմ ծավալով, կտեղափոխվի շինարարության թույլտվությամբ տրամադրված վայր:

3 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ գոյություն ունեցող շինությունների հիմքերի քանդման ընթացքում,
- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ (CO, NO_x):

3.3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.3.1 ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.


- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:


3.3.3 ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ԿԱՆԱԶԱՊԱՏՈՒՄ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության համաձայնեցմանը:

- Ներքին ոռոգման ցանցը նախատեսվում է կաթիլային;
- Նախատեսվող կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի բուսահողի լիցք մոտ 550 խմ, որի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումը կիրականացվի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան՝ նախապես համաձայնեցվելով Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 36 ամիս, նշված հարցը կհստակեցվի մոտ 3 տարի հետո:
- Կանաչապատման տեսակային կազմը և սխեման ներկայացվում է ստորև:







ՈՐԽԵՆԻ (Salix)

ՈՐՈՇՈՒՄ ԻՄՔԵՐԱՄԵՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՏՈՐՈՒՄԱՆ ՕՐԻ ԿԱՐՈՒ ԳՆԱԾՈՒ ՕՒ
ԱՄԻՆՈՒՄԻ ԱՅԻՆԻ, ԶԵՆԱԿԱՆՈՒՄԻ ԵՎ ԶԵՐՈՒՄԻ ՏՐԱՎԱԶԱՐՈՒ,
ԽՈՒՄԱՅԻՐՈՒՄԻ ՕՐԻՆ ԲԱՐՈՒՅՈՒՄԻՆՈՒ ՓՈՒՆԱԿԱՆՈՒ ՏՐԱՎԱԶԱՐՈՒ ԵՎ ԽՈՒ

202504 - 5



UNUH (Platanus)

UNIVERSITY OF CALIFORNIA, RIVERSIDE
 900 UNIVERSITY AVENUE
 RIVERSIDE, CA 92521
 TEL: 951/941-5000 FAX: 951/941-5001
 WWW.UCR.EDU

25254 - 12



ՀԱՅԵՆԻ (Fraxinus)

[illegible]

יוריאטלנטה בל קונסולות ונציגויות



4678 90.90 (Tsuga)

Կերթ հիման, անհամագործիք լուսավորող, համայնքի տնօրեն 50 մ ընդհանուրը, իրականացնում, իրականացնում զգալիորեն ստանդարտից 1: Բնակավայրից հեռավորության վրա, 450 մ հեռավորության վրա, 13 մ: հեռավորության վրա, 450 մ հեռավորության վրա, 450 մ հեռավորության վրա:

2025-18



ԾիրԱՆԵՆԻ (Prunus Armeniaca)

CHRYSLER KUPONBILLET PLASTER VERBODT OM TEWONDERZIJNDE 6-12 U, NAA
VIAANDE BEHOUDENDE 11-12 U. OUFVAND GEFUDE VANDS WERK: AUSEBUT
NABUWENDE 180-92 AUFVANDU 1, 40 UER 14-18 OUFVAND 20-2.

2020 - 20



ԲԱԼԵՆԻ (Cerasus)

[illegible]

2020-15



ፊፊቴሊካ (Morus)

ՀԱՅԿԻՆ ԳՆԱԿԱՆՈՒՄ ԵՎ ԶԵՆՈՒԹՅՈՒՆ ԵՄԵԼՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՅԻՆ ՓԱՆԴԻՆ ԿԱՆ ԶԵՆՈՒՆ ԾԵՂԻՆ ԾՈՒՆԴԱՐԱՆ ԵՎ ԽՈՒՆ ԶԵՆՈՒՄԱՆՈՒՆԵՐՈՒՄ, ՊԱՄԻՐ ԽՈՒՆՈՒ, ԱՆՆ, ԾՈՒԱՅԻՍ, ՓԱՆԴՈՒՄԱՆՈՒՆԵՐ 12-20 Ս. ՏՐԵՒՆԵՐԻ ՄԻՋ ԿԱՄԱՆ ԵՎ ԶԵՆՈՒՄՈՒՆ ԼՈՐԵՏՈՒՅԱՆ ԾԵՂԻՆՈՒՆ ԵՎ ՊՈՒ ԳՈՒՄԱՆՈՒՆ ԵՄԵԼՈՒՄՈՒՆ ԿԵՐԱՆՈՒՆԵՐՈՒՄ, ԳՆԱԿԱՆՈՒՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՆԵՐՈՒՄՈՒՆ:


2024 - 10



ԱՐՄՍԵՆԻ ՀԱՅԱՍՏԱՆՑԱՆ (Sorbus hajastanae)

[illegible]

2004 - 5



3.3.4 ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝
 - ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,
 - բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,
 - գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
- Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների:
- Անվտանգության նկատառումներից ելնելով շին.հրապարակում կտեղադրվեն կողմնակի անձանց մուտքը արգելող նշաններ, և շինհրապարակը կապահովվի լուսավորությամբ:

- իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 ԱՂՄՈՒԿԻ և ԹՐԹՈՒՄՆԵՐԻ ԱԶԴՅՈՒԹՅՈՒՆ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների,
6. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1960000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	400000	400000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	36x35000	1260000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	12x25000	300000
Ամբողջ շինարարության համար		1960000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուին պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: (d) Շինարարության ընթացքում համաձայն մթնոլորտային օդի պահպանության մասին օրենքի, փոշեգոյացումը կանխելու նպատակով շենքերը կծածկվեն անթափանց թաղանթով
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:

	Թափոնների կառավարում	(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարության փուլում ջրցանման ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեմներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոգուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարանջատված: (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի: (c) Շինհրապարակից ելքի ժամանակ լվացվում են տեխնիկական միջոցների անվադողերը: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:

Արտակարգ իրավիճակների կառավարում	Շինարարական աշխատանքների հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարում	- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Շինարարական բոլոր տեղամասերում անհրաժեշտ է ապահովել արտակարգ պատահարների դեպքում կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը; - Շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, հրշեջ հիդրանտներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն: - Մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար: - Հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում՝ ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ - Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագություն, անհողմություն, մառախուղ) դեպքում աշխատանքներն իրականացնել պահպանելով անվտանգության բոլոր կանոնները կամ շին. աշխատանքները դադարեցնել մինչ օդերևութաբանական պայմանները կլինեն բարենպաստ աշխատանքները վերսկսելու համար:
---	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Կանաչապատում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության տնկում	Սեփական տարածք	Արտաքին զննում	մշտական	Կապալառու

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ